*ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ*
*«ԹԻՎ 16 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԲԸ*
*375069 ք.Երևան Դրոյի -17*
*հեռ. 24-00-23*

*МЭРИЯ г.ЕРЕВАНА*
*<ПОЛИКЛИНИКА N16> ЗАО*
*375069 г. Ереван ул. Дро-17*
*тел. 24-00-23*

N____531_____

*«-31-» ---01-----2014թ.*

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Երևանի «Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքներ (գնման հայտը կցվում է):

Ընթացակարգի ծածկագիրն է՝ «ԵԹԻՎ16Պ-ՇՀԱՊՁԲ-(11/15)-14/1»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ հայտերը անհրաժեշտ է ներկայացնել Երևանի «Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ, ք, Երևան, Դրոյի 17, 28 սենյակ հասցեով, Գ. Վարդանյանին (հեռ. 010 24-58-01), մինչև 2014թ. փետրվարի 11-ը, ժամը 15:00-ը:

Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն Երևանի «Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի շենքում, ք, Երևան, Դրոյի 17 հասցում, 28 սենյակում, 2014թ. փետրվարի 11-ին, ժամը 15:00-ին:

Գնման առարկա է Երևանի «Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերումը:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով (հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում "Շրջանակային համաձայնագրեր" բաժնի "հրավերներում կատարված փոփոխություններ" ենթաբաժնում):

Գնման ընթացակարգը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա:

Սույն ծանուցմանը կցված գնման հայտում նշված քիմիական նյութերի այն չափաբաժինների գծով, որոնցով սահմանված են ապրանքների ֆիրմային անվանումները, գնային առաջարկ ներկայացնելու դեպքում, մասնակիցները գնային առաջարկով համարժեք ապրանք առաջարկելու դեպքում ներկայացնում են նաև առաջակվող ապրանքի ֆիրմային անվանումը և համառոտ տեխնիկական բնութագրերը:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ՏՆՕՐԵՆ Մ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Նախագիծ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՆՄԱՆ
N ԵԹԻՎ16Պ- ՇՀԱՊՁԲ-(11/15)-14/1

ք. Երևան "……" ……………. 2014թ.

Երևանի «Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրենի Մ. Ստեփանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից և "………………..”-ն, ի դեմս տնօրեն ……………ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալ մասին.

## 1. Պայմանագրի առարկան

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքները (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

## 2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան:

## 3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

**3.1. Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատճաշ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե գնորդը վաճառողի կողմից պարտականությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանք այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատճաշ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3. Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետներում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինի վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

## 4. **Ապրանքի գինը և վճարման կարգը**

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր առավելագույն գինը կազմում է՝ .................... (..................................) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի միավոր գինը սահմանված է սույն Պայմանագրի N 1 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Ապրանքը Գնորդի կողմից ընդունվելու օրվան հաջորդող ամսում, բայց ոչ ավելի, քան տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու համար նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

## 5. **Ապրանքի որակը և երաշխիքը**

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

Յուրաքանչյուր ապրանքատեսակի երաշխիքային ժամկետին ներկայացվող պահանջները ներկայացված են Պայմանագրի N1 հավելվածում:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 6. **Ապրանքի հանձնումը և ընդունումը**

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետև՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված 2) և Ապրանքի ծեռքբերումը կամ ներմուծումը հավաստող փաստաթղթի բնօրինակը և պատճենը: Եթե Ապրանքի ծեռքբերման գործընթացում առկա են մի քանի միջնորդ կազմակերպություններ,

ապա նախորդ միջնորդ կազմակերպությունների կողմից դրա ձեռքբերման կամ ներմուծման վերաբերյալ փաստաթուղթ չի ներկայացվում:

6.2 Արձանագրություն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ինչպես նաև ներկայացվում է սույն պայմանագրի 6.1 կետով նախատեսված փաստաթղթերը: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) Հարցի կանոնավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

## 7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնված Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված ՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը, տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

Սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան Համաձայնագրի կնքման հիման վրա:

Սույն պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքվելու օրվան հաջորդող տարվա ընթացքում Ապրանքի մատակարարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

9.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև պայմանագրի կնքումը Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանարի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով

փոխհատուցե իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ, բացառությամբ՝

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի. Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը

- սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Սույն պայմանագրում չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները խնայողություններ և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասներն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում կատարողի կնքած այդ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգովորող նորմերով և դրանց համար պատասխանատու է Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.6 Սույն պայմանագիրը կազմված է ........... էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և 2 հավելվածները՝ բաղկացած ....... էջից, հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

## 10. ԿՈՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ԳՆՈՐԴ**

ք, Երևան, Դրոյի փ., 17 շենք,
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» «Զեյթուն» մ/ճ
Հ/Հ 163518008509
ՀՎՀՀ 00878075

---------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

---------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 1
“......” ................ 2014թ. կնքված
N ԵԹԻՎ16Պ- ՇՀԱՊՁԲ-(11/15)-14/1
ծածկագրով գնման պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Երևանի «Թիվ 16 Պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար քիմիական նյութերի գնման

| Ապրանքի* | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Չ/Հ | **անվանումը** | **տեխնիկական բնութագիրը (հատկանիշները)** | **Չափի միավորը** | **Առավելագույն քանակը** | **դիմաց վճարման ժամկետը** |
| 1. | Ցոլիկլոն անտի A | Արյան խմբի որոշման 10մլ | Սրվակ | 7 | Ապրանքը գնորդի կողմից ընդունվելու օրվան հաջորդող ամսում |
| 2. | Ցոլիկլոն անտի B | Արյան խմբի որոշման 10մլ | Սրվակ | 6 | |
| 3. | Ցոլիկլոն անտի C | Արյան խմբի որոշման 5մլ | Սրվակ | 4 | |
| 4. | Ցոլիկլոն անտի D | Արյան խմբի որոշման 10մլ | Սրվակ | 5 | |
| 5. | Ցոլիկլոն անտի AB | Արյան խմբի որոշման 10մլ | Սրվակ | 4 | |
| 6. | Ազոպիրամ | Քիմիապես մաքուր | Հատ | 3 | |
| 7. | Սուլֆոսալիցիլաթթու | Քիմիապես մաքուր | Լիտր | 0.5 | |
| 8. | Իմերսիոն յուղ | Քիմիապես մաքուր | Լիտր | 200 | |
| 9. | MRP- հավ. Քան | Հավաքակազմ լատեքս ագլյուտինցիոն | Հատ | 5 | |
| 10. | CRP- հավ. Քան | հավաքակազմ լատեքս ագլյուտինցիոն | Հատ | 4 | |
| 11. | Գլյուկոզայի որոշման հավաքակազմ | Հավաքակազմ | Հատ | 6 | |
| 12. | Մեդիսկրին | ՍՏՐԻՊ-ԹԵՍՏ | Հատ | 200 | |
| 13. | Սպիրտ 96% | Բժշկական մաքուր 1լ շշերով | լիտր | 15 | |
| 14. | Սպիրտ 70% | Բժշկական մաքուր 0.5 լտրանոց շշերով | Լիտր | 6 | |
| 15. | քլորսեպտ | Հականեխիչ հաբ | Հատ | 2400 | |
| 16. | Պերիհդրոլ | 33% 0.5 լիտրանոց շշերով | Լիտր | 20 | |
| 17. | Ուրեապլազմայի որոշման հավաքակազմ | ԻՖԱ մեթոդով | Տուփ | 2 | |
| 18. | Քլամիդիազի որոշման հավաքակազմ | ԻՖԱ մեթոդով | Տուփ | 2 | |
| 19. | Ցիտոմեգալո վիրուսի որոշման հավաքակազմ | ԻՖԱ մեթոդով | Տուփ | 1 | |
| 20. | Տոքսոպլազմոզի որոշման հավաքակազմ | ԻՖԱ մեթոդով | Տուփ | 1 | |
| 21. | Գլիկոզացված HB որոշման հավաքակազմ | ԻՖԱ մեթոդով | Տուփ | 1 | |
| 22. | TTG որոշման հավաքակազմ | ԻՖԱ մեթոդով | Տուփ | 2 | |
| 23. | Ազատ T4 որոշման հավաքակազմ | ԻՖԱ մեթոդով | Տուփ | 2 | |
| 24. | Անտիթիրիոգլոբուլինի որոշման հավաքակազմ | ԻՖԱ մեթոդով | Տուփ | 1 | |
| 25. | Անտի TPO | ԻՖԱ մեթոդով | Տուփ | 1 | |
| 26. | Ռեվմոֆակտորի որոշման հավաքակազմ | Լատեքս ագլյուտինացիոն | Տուփ | 1 | |
| 27. | Կալցիումի որոշման հավաքակազմ | Գունաչափական մեթոդով | Տուփ | 5 | |
| 28. | Ֆոսֆորի որոշման հավաքակազմ | Գունաչափական մեթոդով | Տուփ | 5 | |
| 29. | Խոլեստերինի որոշման հավաքակազմ | Գունաչափական մեթոդով | Տուփ | 5 | |
| 30. | Ընդհանուր սպիտակուցի որոշման հավաքակազմ | Գունաչափական մեթոդով | Տուփ | 1 | |
| 31. | Բիլիռուբինի որոշման հավաքակազմ | Գունաչափական մեթոդով | Տուփ | 1 | |
| 32. | Լակտատ դեհիդրոգենազայի որոշման հավաքակազմ | Կինետիկ մեթոդով | Տուփ | 1 | |
| 33. | ASLO որոշման հավաքակազմ | Տուրբիդիմետրիկ մեթոդով | Տուփ | 2 | |
| 34. | Կրեատինինի որոշման հավաքակազմ | ՖԵՐՄԵՆՏԱՏԻՎ | Տուփ | 5 | |
| 35. | Հեմոգլոբինի որոշման հավաքակազմ | Գունաչափական մեթոդով | Տուփ | 5 | |
| 36. | Ուռին-10 | ՍՏՐԻՊ ԹԵՍՏ | Տուփ | 2 | |
| 37. | Ուռին-2 | ՍՏՐԻՊ ԹԵՍՏ | Տուփ | 1 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 38. | ԱԼԲՈՒՄԻՆՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԱՔԱԿԱԶՄ | Գունաչափական մեթոդով | Տուփ | 3 | Ապրանքը գնորդի կողմից ընդունվելու օրվան հաջորդող ամսում |
| 39. | ALT որոշման հավաքակազմ | Կինետիկ մեթոդով | Տուփ | 5 | |
| 40. | AST որոշման հավաքակազմ | Կինետիկ մեթոդով | Տուփ | 5 | |
| 41. | GGT որոշման հավաքակազմ | Կինետիկ մեթոդով | Տուփ | 2 | |
| 42. | Հիմնային ֆոսֆատազայինորոշման հավաքակազմ | Կինետիկ մեթոդով | Տուփ | 3 | |
| 43. | ԱՄԻԼԱԶԱՅԻ որոշման հավաքակազմ | Կինետիկ մեթոդով | Տուփ | 3 | |
| 44. | Միզանյութի որոշման հավաքակազմ | Գունաչափական մեթոդով | Տուփ | 5 | |
| 45. | ԱԼՖԱ ԼԻՊՈՊՐՈՏԵԻԴՆԵՐԻ որոշման հավաքակազմ | Գունաչափական մեթոդով | Տուփ | 1 | |
| 46. | ԱՍԿԱՐԻԴՈԶԻ որոշման հավաքակազմ | Իֆա մեթոդով | Տուփ | 1 | |
| 47. | ԼՅԱՄԲԼԻՈԶԻ որոշման հավաքակազմ | Իֆա մեթոդով | Տուփ | 1 | |
| 48. | ԻՄՈՒՆՈԳԼՈԲՈՒԼԻՆ A ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԱՔԱԿԱԶՄ | Տուրբիդիմետրիկ մեթոդով | Տուփ | 1 | |
| 49. | ԻՄՈՒՆՈԳԼՈԲՈՒԼԻՆ M որոշման հավաքակազմ | Տուրբիդիմետրիկ մեթոդով | Տուփ | 1 | |
| 50. | ԻՄՈՒՆՈԳԼՈԲՈՒԼԻՆ G որոշման հավաքակազմ | Տուրբիդիմետրիկ մեթոդով | Տուփ | 1 | |
| 51. | ԻՄՈՒՆՈԳԼՈԲՈՒԼԻՆ E որոշման հավաքակազմ | Իֆա մեթոդով | Տուփ | 1 | |
| 52. | CRPհավաքածու | Տուրբիդիմետրիկ մեթոդով | Տուփ | 5 | |
| 53. | ASLO որոշման հավաքակազմ | Տուրբիդիմետրիկ մեթոդով | Տուփ | 2 | |
| 54. | ՖԻՔՍԱԺ 15 Լ ՀԱՄԱՐ | XPF X-R AY FIXER SALT | հատ | 6 | |
| 55. | ԵՐԵՎԱԿԻՉ 15 Լ ՀԱՄԱՐ | Retina X-RAY XPE | հատ | 6 | |
| 56. | ASLO որոշման հավաքակազմ | Լատեքս ագլուտինացին մեթոդով | Տուփ | 2 | |

| | | |
|---|---|---|
| | ***Մատակարարման ժամկետը և վայրը՝** | **Մատակարարման ժամկետը** ՝ Մատակարարումներն իրականացվում են համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա, համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված յուրաքանչյուր ամիս՝ըստ պատվիրատուի կողմից սահմանված քանակների, նկատի ունենալով, որ մատակարարման առաջին պատվերի տրամադրման և մատակարարման միջև ընկած ժամանակահատվածը չի կարող պակասլ լինել 31 աշխատանքային օրից, եթե մատակարարը չի համաձայնում մատակարարումն իրականացնել ավելի կարճ ժամկետում: Ընդ որում հաջորդող պատվերների մատակարարումներն իրականացվում են պատվերի տրմանը հաջորդող 5 օրվա ընթացքում:<br>**Մատակարարման վայրը՝** Թիվ 16 պոլիկլինիկա, ք, Երևան, Դրոյի 17, |
| | ***Պիտանելիության ժամկետը** | Ապրանքը գնորդի կողմից ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված՝ առնվազն 1 տարի |

** Ապրանքները պետք է լինեն չօգտագործված: Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է վաճառողը:*

**ԳՆՈՐԴ**

ք, Երևան, Դրոյի փ., 17 շենք,
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» «Զեյթուն» մ/ճ
Հ/Հ 163518008509
ՀՎՀՀ 00878075

--------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

--------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2
“......” ..... .... .............. 2014թ. Կնքված
N ԵԹԻՎ16Պ- ՇՀԱՊՁԲ-(11/15)-14/1
ծածկագրով գնման պայմանագրի

Պատվիրատու

______________________________
______________________________
______________________________
hասցե____________________________
hh________________________________
______________________________
hվhh______________________________

Կատարող

______________________________
______________________________
______________________________
hասցե____________________________
hh________________________________
______________________________
hվhh______________________________

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«__» «_________» 2014թ.

Պայմանագրի անվանումը՝ «_____________________ » :

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «__ » «_____________» 2014թ.

Պայմանագրի համարը՝ ___________

Պատվիրատուն, ի դեմս_______________________________________________ և Կատարողն՝ ի դեմս_______________________________________________, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը «__» «_________» 2014թ-ից «__» «_________» 2014թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշները | Աշխատանքների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| **Ընդամենը** | ------------- | ------------- | | ---------- |

Վերոհիշյալ աշխատանքների կաատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

______________________________
(ստորագրություն)

ազգանուն__________________

Կ.Տ

Աշխատանքը ընդունեց

______________________________
(ստորագրություն)

ազգանուն__________________

Կ.Տ